ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «18» 10 2013թ. № 1012-Ա

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՅՏԻ ՁԵՎԸ, ՆՇԱՆԱԿՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի թիվ 623-Ն որոշման հավելվածի 14-րդ կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1) համապատասխանության գնահատման մարմնի նշանակման համար նախատեսված հայտի ձևը՝ համաձայն հավելված N 1-ի:

2) համապատասխանության գնահատման մարմնի նշանակման վկայականի ձևը՝ համաձայն հավելված N 2-ի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Գ. Բաղալյանին:

ՎԱՀՐԱՄ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2013 թ. ----------
N -Ն հրամանի

ՀԱՅՏ

համապատասխանության գնահատման մարմնի

նշանակման համար նախատեսված

_____

(իրավաբանական անձի անվանում, գտնվելու վայր, էլ. հասցե, հեռախոս, ֆաքս)

_____

Խնդրում եմ նշանակել՝

_____

_____

(նշել նշանակման ոլորտը՝ համապատասխան տեխնիկական կանոնակարգը/երը)

_____

_____

Հայտին կից ներկայացվող փաստաթղթերն են՝

1. Համապատասխանության գնահատման գործունեության նկարագիրը;

2. Հավատարմագրման ազգային մարմնի կողմից տրված հավատարմագրման վկայագրի պատճենը;

3. Համապատասխանության գնահատման մեկ կամ մի քանի ընթացակարգերի անվանումները և մեկ կամ մի քանի արտադրանքի անվանումները;

4. Այլ փաստաթղթեր

Հավաստում եմ, որ «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի «Համապատասխանության գնահատման մարմինների նշանակման ընթացակարգը և չափանիշները հաստատելու մասին» թիվ 623-Ն որոշմամբ սահմանված՝ նշանակման համար ներկայացված բոլոր փաստաթղթերը համապատասխանում են իրականությանը:

Հայտատու՝ _____ _____

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

_____ _____ 20 թ.

Կ. Տ.

Հավելված N 2
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2013 թ. ----------
N -Ն հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Գրանցված է Համապատասխանության
գնահատման նշանակված մարմինների
գրանցամատյանում
_____ _____ 20 թ.

N _____

Ուժի մեջ է մինչև _____ _____ 20 թ.

Սույն վկայականը հավաստում է, որ

_____
(իրավաբանական անձի անվանումը)

համապատասխանում է նշանակման _____

_____

_____

չափանիշներին և նշանակվել է որպես համապատասխանության գնահատման նշանակված մարմին:

_____

_____

(իրավաբանական անձի գտնվելու վայր, էլ. հասցե, հեռախոս, ֆաքս)

_____

Սույն վկայականով համապատասխանության գնահատման նշանակված մարմինը նշանակված է՝ _____

_____

(նշել գործունեության ոլորտը)

նկատմամբ համապատասխանության գնահատման աշխատանքներ իրականացնելու համար:

ՀՀ էկոնոմիկայի նախարար՝ _____

(ստորագրությունը)

Կ.Տ.